

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՃԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԿ

## ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Դասընթաց` Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների  
վերապատրաստում**

**Թեմա` Գործնական աշխատանքները «Տեխնոլոգիա» առարկայի  
դասավանդման ընթացքում**


**Ղեկավարներ` Ժենյա Միրիբյան**

**Ուսուցչուհի` Գագիկ Բատիկյան**

Գալստ 2023

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ	4
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	4
ՓԱՍՏԵՐ ԵՎ ԲԱՑԱՅ ԱՅՏՈՒ ՄՆԵՐ	11
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	17
ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅՈՒՆ	18



## ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական պրակտիկայում հաճախ կիրառվում է գործնական մեթոդը (վարժություններ, գործնական աշխատանք, լաբորատոր աշխատանք, ճանաչողական խաղեր): Լաբորատոր աշխատանքը զարգացնում է տրամաբանական մտածողությունը և գործնական հմտությունը: Բարեխիղճ, սրտացավ, իսկական ուսուցիչը մտահոգվում է ոչ միայն ծրագրային նյութը խորապես ուսուցանելու, այլև աշակերտների սովորածի, յուրացրածի համար ճիշտ գնահատակն նշանակելու հարցով: Այս առումով կարևորում են գործնական աշխատանքների կազմակերպումը և գնահատումը: Գործնական աշխատանքները սովորաբար կատարվում են յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունից և ամփոփումից հետո: Ցավոք, ոչ միշտ է, որ ունենում ենք համապատասխան նյութեր և սարքավորումներ, ինչը հնարավորություն է չի տալիս, որ սովորողները մի քանի խմբերով կատարեն պահանջվող փորձերը, գործնական աշխատանքները: Որպեսզի գործնական աշխատանքները կազմակերպվեն արդյունավետ և ծառայեն իրենց նպատակին, և այդ առումով սովորողի գնահատականը լինի իրական, վարվում են ներքոնշված կերպ: Թեման ուսուցանելուց հետո կատարում են գործնական աշխատանք: Գործնական աշխատանքը կատարում են և անհատական, և խմբային ձևով: Խմբային աշխատանքից հետո հանձնարարում են յուրաքանչյուր աշակերտի գրել հաշվետվություն: Այսինքն, յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր կատարած աշխատանքը, ներկայացնում են օգտագործված նյութերի և գործիքների առօրյայում, կենցաղում, տնտեսության մեջ և այլն: համացանցից: Երբեմն էլ հանձնարարում են գրել տեղեկություններ համացանցից: Խմբային աշխատանքը գնահատում են իմ մշակած գնահատման սանդղակով:

### ԳՆԱԶՏՄԱՆ ՍԱՆԴՐԱԿ

Սովորողներ	Արմեն	Սոնա	Անի
Ժամանակ			
Համագործակցություն			
Առաջադրանքի ներկայացում			



**Ջետազոտության արդիականությունը:** Մեր կողմից ուսումնասիրվել է մի շարք մասնագիտական գրականություն, որից մենք եկանք այն եզրահանգման, որ այս

թեման արդիական է և ունի ուսումնասիրման անհրաժեշտություն:

Գործնական աշխատանքները դպրացականների համար բարդ գործընթաց է որի ճիշտ կազմակերպումը մանակավարժի կողմից չի հանգեցնի խնդիրների

:

**Ջեռագոտության օբյեկտը:** Գործնական աշխատանքների ուսուցումն է դպրոցում:

**Ջեռագոտության առարկան:** Գործնական աշխատանքը:

**Ջեռագոտության վարկածը:** Մենք ենթադրում ենք,որ մեր կողմից առաջադրված գործնական աշխատանքների կատարմանը նպաստող մանկավարժական աշխատանքների միջոցով դպրոցականները կհասնեն ճիշտ արդյունքի:

**Ջեռագոտության նպատակը:** Մշակել հատուկ միջոցներ և պայմաններ,որոնք կնպաստեն գործնական աշխատանքների կատարմանը ու զարգացմանը, և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

### **Ջեռագոտման խնդիրներն են՝**

1.Ուսումնասիրել և վերլուծել հատուկ գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում առկա հետազոտվող հիմնախնդրի ժամանակակից մոտեցումները, լուսաբանվածությունը:

3. Ծանոթանալ ուսումնական հաստատություններում գործնական աշխատանքների կատարման ճիշտ մեթոդիակային:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

**Գործնական աշխատանքների արդյունավետությունը թեմայի յուրացման վրա**

Պետք է նշել նաև տեխնոլոգիայի առանձնահատուկ դերը մարդկության զարգացման ու ժամանակակից քաղաքակրթության ձևավորման գործում: Տեղեկատվական ու հաշվիչ տեխնոլոգիաների զարգացումը, տարածության և ժամանակի լավ ըմբռնումը, բնության մեջ գոյություն ունեցող բազում օրինաչափությունների հայտնաբերումն ու նկարագրումը ցայտուն կերպով ընդգծում են տեծնալոգիայի գիտական և մշակութային արժեքը: Եվ որ ամենակարևորն է, տեխնոլոգիան նպաստում է մարդու ստեղծարար կարողությունների զարգացմանը:

Այս առարկայի ուսուցմամբ կարևորվում են ուսուցիչների կիրառած համապատասխան մեթոդներով սովորողների մեջ ձևավորել ,արժեքներե և ,վերաբերմունքե բաղադրիչները և դրանց կիրառությունը ,Տեխնոլոգիայիե դասերին: ,Տեխնոլոգիանե ընդհանուր միջնակարգ կրթության բաղկացուցիչ մասն է, որը սովորողներին զինում է անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով, ունակություններով, առանց որոնց անհնար է երկրի լիարժեք սոցիալ-տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը: Ելնելով դրանից, դասավանդելիս պետք է մեծ ուշադրություն դարձնել տարբեր մեթոդների կիրառմանը՝ արտաքին աշխարհին ծանոթանալիս, սոցիալ-տնտեսական թե տեխնիկական գործընթացները կառավարելիս, թե՛ կենցաղային և թե՛ գիտական հիմնախնդիրները լուծելիս:

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի սովորողներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Սովորողին պետք է հասկանալի դարձնել տեխնոլոգիական տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները

կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը:

Սովորողների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև սովորողների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա<sup>1</sup>: Յենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված՝ գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դասասեսնյակից դուրս:

Примечание [1]: Յղումն արված չէ:



Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու տրադիցիոն միջոց են (նաև գործնական աշխատանքի տեսակ) էքսկուրսիաները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացում պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները (աղցանների պատրաստում, փայտամխակում, փափուկ խաղալիքների պատրաստում և այլն)<sup>2</sup>: Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև սովորողների կարողունակությունները, ունեցած փորձը: Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ,

Примечание [2]: Յղումն արված չէ



որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,


- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Էքսկուրսիան ուսուցման պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով աշակերտներն ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները, ծանոթանում հայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, իրն ու առարկան, հարստացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը, ճանաչողական մեծ նշանակություն ունի էքսկուրսիան, որին դասը, գործնական պարապմունքները, իրենց կրթական մեծ նշանակությամբ հանդերձ, փոխարինել չեն կարող:

Էքսկուրսիայի ընթացքում անմիջական կապ է ստեղծվում շրջապատի, միջավայրի հետ, հնարավոր պայմաններ են առաջանում ավելի մոտիկից ու խոր ճանաչելու աշակերտին, նրա բնավորությունը, հակումները, հմտությունները, հոգեբանությունը: Տեխնոլոգիան ուսումնասիրելիս նպատակահարմար է աշակերտներին էքսկուրսիա տանել անտառ, դաշտավայր, արդյունաբերական գործարաններ՝ կաթի

վերամշակման, պանրի, գինու, արտադրության տեխնոլոգիաներին ծանոթանալու, ինչու չէ՛ նար մասնագիտական կողմնորոշման համար: Ընթացիկ էքսկուրսիաների համար լավագույն վայրեր են նաև արվեստի թանգարանները՝ Մաչանենց տունը/Էջմիածին/, Ասլամազյան քույրերի տուն/Գյումրի/, Փարաջանովի թանգարան/Երևան/ և ցուցահանդեսներ: Գարնանային եզրափակիչ էքսկուրսիաների ժամանակ դպրոցականները ուսումնասիրում են բնության գարնանային երևույթները, բուսական և կենդանական ծագում ունեցող ցուցանմուշներ են հավաքում ձմեռվա ամիսներին անցած նյութը կրկնելու և խորացնելու նպատակով:





Էքսկուրսիաների տարբեր տիպերը հնարավորություն են տալիս ուսուցանվող թեմայի տեսականը զուգակցել գործնականին, անցած նյութն ավելի խոր ու բազմակողմանի մատուցել աշակերտներին: Խիստ անհրաժեշտ է ժամանակին կազմակերպել ծրագրով նախատեսված էքսկուրսիաները:

Էքսկուրսիայի կազմակերպումն ու անցկացումը կազմված են հետևյալ քայլերից.

- նախապատրաստում,

- կազմակերպում,
- ամփոփում,

Էքսկուրսիային նախապատրաստվում է ինչպես ուսուցիչը, այնպես էլ սովորողը: Ուսուցիչը նախ որոշում է, թե էքսկուրսիան ինչ հարցի շուրջ է և որտե՞ղ պետք է կազմակերպվի, ի նչ նպատակ պիտի հետապնդի, ի՞նչ պարագաներ են անհրաժեշտ, որքան ժամանակ է պետք :

,Յողի կարևորությունը մարդու կյանքում և հողի կազմությունը՝ հումուս, ավազ, կավե թեմայով կազմակերպել եմ գործնական դաս բնության գրկում:Դասի համար նախօրոք պատրաստել էի անհրաժեշտ պարագաներ՝ սպիրտայրոց, ապակի, հող, լուցկի:Սովորողները գործնական պարապմունքի արդյունքում տեսան հողից գուրդու բարձրացումը և հումուսի այրումը :



Գործնական աշխատանքներում դրված փորձերի նպատակն է ամրապնդել տեսական նյութը, զարգացնել աշակերտների աշխատանքային ունակություններն ու հմտությունները: Որպեսզի գործնական պարապմունքները հաջող անցնեն, անհրաժեշտ է, որ ուսուցիչը առաջին հերթին կազմի փորձի պլանը, ապա՝ անձամբ կատարի փորձը, ստուգի փորձի արդյունքները: Նման նախապատրաստական աշխատանքի նպատակն է նախօրոք վերացնել փորձի հետ առնչվող թերությունները:

Ուսուցիչն ուսումնական տարվա ընթացքում գործնական աշխատանքներ կազմակերպելիս ղեկավարվում է պետական ծրագրով և այն նախատեսում է իր թեմատիկ պլանները կազմելիս: Նա նախօրոք ձեռք է բերում գործնական պարապմունքների անհրաժեշտ նյութեր, սարքավորումներ:

Տարբերում ենք գործնական աշխատանքների հետևյալ տեսակները՝

- Բնության առարկաների ճանաչման ե որոշման աշխատանքներ,
- Դիտումներ և դիտված երևույթների հետազոտ գրանցում.
- Փորձի կատարում, փորձում առաջադրված հարցի որոշում, ճանաչում և որոշում:
- Կենդանի նյութի կամ օրգանիզմի ճանաչում:

Անհրաժեշտ է այստեղ տարբերել, որ ցուցադրական մեթոդի ժամանակ աշակերտները դիտում են ուսուցչի կողմից ցուցադրվող աղյուսակները, փորձերը, պարապմունքների ժամանակ աշակերտներն անձամբ են աշխատանքը: Այսպիսի աշխատանքի արդյունքը լինում է այն, որ աշակերտները լրիվ պատկերացում են ունենում իրենց կատարածի մասին:





## ՓԱՍՏԵՐ ԵՎ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄՆԵՐ

Տեխնալոգիայի ուսուցման համար ցանկալի է, որ դասաստենյակը գտնվի դպրոցի ճաշարանին մոտիկ, հագեցած լինի անհրաժեշտ դիդակտիկ նյութերով, լինի մեծ և հարմարավետ:

Գործնական աշխատանքների տիպի դասի թեմատիկան բավականին հարուստ է 5- րդ և 6-րդ դասարանի տեծնուլոգիայի դասագրքում : Այս դասընթացից գործնական աշխատանքներն իրականացվում են սննդի, գործվածքների, մոդելների միջոցով: Ցանկացած գործնական աշխատանքների դասի կազմակերպման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե սովորողները նախորդ դասընթացներից և թեմաներից այդ աշխատանքներին վերաբերող նյութերը և առաջադրանքները որքանով են յուրացրել և որքանով են պատրաստ գործնական աշխատանքը կատարելու համար:



Այժմ համառոտակի քննության առնենք գործնական աշխատանքների դասի կառուցվածքին վերաբերող հարցերը: Գործնական աշխատանքների դասը պետք է բաղկացած լինի հետևյալ օղակներից.

1. **Կազմակերպչական մաս** — Դասի հենց սկզբից ուսուցիչն աշակերտների առջև դնում է որոշակի խնդիր կամ խնդիրներ: Դասարանը բաժանում է խմբերի, յուրաքանչյուր խմբին հանձնարարում է տվյալ խմբի առաջադրանքը:

2. **Ուսումնասիրման պլանի կազմում** —Սովորողները ուսուցչի մասնակցությամբ կատարում են հանձնարարված աշխատանքը: Եթե ուսուցիչը առաջին անգամ է հանձնարարում այդպիսի աշխատանք, պարտավոր է գրատախտակի վրա գրել պլանը և որոշ հարցերի վերաբերյալ տալ բացատրություն կամ պարզաբանում: Այդպիսի նկարագրության համար կազմվում է պլանը:

Աշակերտները, ստանալով ուսուցչի հանձնարարականը, պլանը արտագրում են տետրերում և անցնում աշխատանքի պլանի կետերի հաջորդականությունը պահպանելով:

Ուսուցիչը հիշեցնում է, որ աշակերտները կարող են ազատ օգտվել և տվյալներ բերել նաև դասագրքի համապատասխան դասանյութից: Այնուհետև աշակերտները շարադրում են հանձնարարությունը պլանին համապատասխան:

Դասի այս մասին հատկացվում է 25-30 րոպե: Աշխատանքն ավարտելուց հետո ուսուցիչը հանձնարարում է աշակերտներից մեկին ներկայացնել աշխատանքը, ապա կատարվում է բացթողումների լրացում և շտկում:

- 1. Թեմայի ամփոփում .
- 2. Գործնական աշխատանք



Առանձնացրու՝ պարզ և բարդ տերևները: Մի քանի պարզ և բարդ տերևի օրինակ էլ գտիր



Գործնական աշխատանքի կատարման ճշտությունը, հաջորդական շարադրանքը ստուգելու նպատակով ուսուցիչը հավաքում է կատարված աշխատանքները, որպեսզի տանը ստուգի և գնահատի:

Տեխնոլոգիայի ուսուցումն ունի իր առանձնահատկությունները, քանի որ դասի ընթացքում պահանջվում է բնական նյութերի / բամբակ, բուրդ, փայտ, տերև,կավ/ ցուցադրում :

Դրանք հաջող և արդյունավետ իրականացնելու Չամար անհրաժեշտ է, որ կաբինետը լինի լուսավոր: Անհրաժեշտ լուսավորվածությունը, հարմար կահույքը, մաքրությունը, թթվածնով հարուստ օդը և շենքի նորմալ ջերմաստիճանը բարենպաստ պայմաններ են ստեղծում ուսուցման պրոցեսի արդյունավետությունն ապահովելու համար:

## ԵՉՐԱԿԻԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեխնոլոգիայի բոլոր դասընթացների համար **գործնական մեթոդը** կիրառվում է զանազան վարժություններ և փորձեր կատարելու ժամանակ, որի հիմնական նպատակն է ձևավորել կարողություններ և հմտություններ տեսական գիտելիքները կյանքում նպատակասլաց կիրառելու համար:

Գրառածի տեսողական պատկերը նպաստում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդմանը: Սակայն գրավոր աշխատանքները ժամանակի ավելի մեծ ծախս են պահանջում:

Տեխնոլոգիայի դասավանդման գործընթացում գործնական աշխատանքների կատարումն իրենց բնույթով հարում են գրաֆիկական աշխատանքներին: Գրաֆիկ պատկերման տեխնիկան հիմնականում ուսումնասիրվում է նկարչության և գծագրության պարապմունքների ժամանակ, բայց դրանից պարտավոր են օգտվել նաև մյուս ուսուցիչները:

Գործնական աշխատանքները տեխնոլոգիայից աշակերտներին հնարավորություն են տալիս միջին դասարաններից սկսած մասնագիտական կողմնորոշման համար:

Ուսուցման յուրաքանչյուր մեթոդ նպատակաուղղված է ինչպես սովորողի գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը, այնպես էլ նրա դաստիարակությանը՝ արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման ձևավորմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <<Անտարես>>, 2004.
2. Морозов А. В. Эвристические методы решения творческих задач.  
<http://www.i-u.ru/>
3. Յու. Ա. Ամիրջանյան ,Ժամանակակից դիդակտիկա
4. Ղուլումջյան Գ. Ե. ,Մանկավարժություն
5. Բաբանսկի ,Մանկավարժություն 2-րդ հատոր